Արմենուհի Հովակիմյան

Արմինե Մովսիսյան-Մուտքի ճամբարի համակարգող

Արմենուհին բանասեր է: Ունի 10 տարվա մանկավարժական փորձ: Աշխատում է Էջմիածնի Արաքս գյուղի դպրոցում՝ որպես փոխտնօրեն: Ներառական կրթության ոլորտում ևս փորձ ունի: 2022թ. սեպտեմբերից սկսած՝ կրթահամալիրի Հարավային դպրոցի ծնող է: Խաղաղ է, ստեղծական: Պատրաստակամ է շրջապատին օգնելու հարցում: Կարծիքը հիմնավոր է, տրամաբանված: Լսում է դիմացինին, հարգում նրա կարծիքը, քննարկում: Տպավորված է կրթահամալիրյան միջավայրով, հատկապես՝ Արատեսով: Արատեսում մասնակցել է թե՛ ծիսական, թե՛ խոհանոցային գործունեություններին, քայլքին, գրական քննարկումներին և այլն:

Մարիետ Սիմոնյան

Արմենուհին խաղաղ, պատրաստակամ, պարտաճանաչ մարդու տպավորություն թողեց: Քննարկումներին ակտիվ էր, արտահայտում էր հիմնավորված կարծիքներ: Բլոգում հրապարակումները ամբողջական էին, ոճ ունեին, հետաքրքիր էր ընթերցելը: Սակայն Արմենուհին, լինելով բանասեր, աշխատանքային փորձ ունենալով, աշխատած լինելով ավագ դասարաններում, զարմանալիորեն կետադրական բազմաթիվ վրիպումներ է թույլ տալիս իր գրավոր խոսքում:

Լուսինե Փաշայան

Արմենուհին կիրթ, կայացած, փորձառու մասնագետ է: Ունի աշխատանքային հարուստ փորձ, սեփական կարծիքը կարողանում է հիմնավորել: Բլոգում հրապարակված են քառօրյա վերապատրաստման, մուտքի ճամբարի մասին լուսաբանումներ:

Լուսինե Բուշ

Միջին դպրոցում իրականացրել է երկշաբաթյա կամավորական աշխատանք՝ սեպտեմբերի 5-ից 16-ը: Պարտաճանաչ, գրագետ մասնագետ է, բարեհամբույր,

սովորողների հետ կիրթ, համբերատար, սիրով: Արագ ինտեգրվեց նաև կոլեկտիվում: Հմուտ է վարում դասերը, սովորողները հետարքրությամբ են մասնակցում:

Ռիմա Երեմյան-6-րդ դասարանցիների կազմակերպիչ

Արմենուհի Հովակիմյանը կիրթ, բարեհամբյուր, մեղմ, հավասարակշռված, պատրաստակամ մարդ է: Աշխատանքը դասարաններում ստացվում է, կարողանում է սովորողներին գրավել, հետաքրքրություն առաջացնել դեպի առարկան: Արմինեն նաև երկարացված օրվա կազմակերպիչ է, հոգատար ու ուշադիր է սովորողների նկատմամբ: